ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՀԵՏ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԹԵՄԱՅՈՎ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) «Ամբերդ» հետազոտական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն), Համալսարանի հետազոտական կարողությունների բարելավման և սեփական հետազոտական ներուժը պետական շահերին ի նպաստ բերելու, ինչպես նաև հանրային հետաքրքրություն ներկայացնող կիրառական հետազոտությունների իրականացման և հրապարակման, ընթացիկ հետազոտական աշխատանքներում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների, մագիստրոսների և ասպիրանտների ներգրավման, ինչպես նաև օտարալեզու հետազոտությունների հրապարակումների ավելացման նպատակով՝ արտաքին շահառուների հետ խորհրդակցությունների արդյունքում հայտարարում է դրամաշնորհային հետազոտական ծրագրի իրականացման մրցույթ **հետևյալ թեմայով.**

ՀՀ ԹՌՉՆԱՄՍԻ ՇՈՒԿԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ:

1. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ

1.1. Թեմայի շրջանակում լուծվելիք խնդիրները:

Վերլուծել ՀՀ թռչնամսի շուկան և դրա զարգացման միտումները 2015-2020 թթ., գնահատել շուկայի մրցակցության վիճակն ու համակենտրոնացման աստիճանը՝ ստանալով այս ապրանքային շուկայում մրցակցային վիճակի ամբողջական պատկերը: Գնահատել ՀՀ թռչնամսի շուկայում մրցակցային միջավայրը՝ բացահայտել մրցակցությունը սահմանափակող հնարավոր խոչընդոտներն ու գերիշխող դիրքի չարաշահումների դեպքերը և առաջարկել դրանց լուծման ուղիներ:

1.2. Աշխատանքային լեզուն:

Հայերեն:

1.3. Հրապարակման ներկայացված զեկույցի ծավալի 1/4-ն ընդգրկող սեղմագրի աշխատանքային լեզուն:

Ռուսերեն, անգլերեն։

1.4. Ակնկալվող արդյունքը։

ՀՀ թռչնամսի շուկայի մրցակցային վիճակի ամբողջական գնահատում և ոլորտում մրցակցության ապահովման պետական քաղաքականության արդյունավետության կատարելագործման մեխանզմների առաջադրում։

1.5. Հետազոտության արդյունքների շահառուները։

ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ անվտանգության խորհրդի գրասենյակ, ՀՀ մարզպետարաններ և տեղական ինքնակառավարման մարմիններ, շուկայում գործունեություն իրականացնող կազմակեր-պություններ։

1.6. Հետազոտական թեմայի իրականացման պայմանները և ակնկալվող արդյունքները։

Պայմանները։ Հետազոտության համար սահմանվող **ժամկետը 6 ամիս է։** Հետազոտական խումբը պետք է ձևավորվի տվյալ թեմայի տեխնիկական առաջադրանքին համապատասխանող փորձ և գիտելիքներ ունեցող մասնագետներից։ Հետազոտական խումբը ձևավորվում է Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից (այդ թվում՝ համատեղությամբ կամ ժամավճարով աշխատող) և ասպիրանտներից ու ուսանողներից որոշակի համամասնությամբ կազմված կատարողներից։ «Ասպիրանտ» հասկացությունը ներառում է նաև Համալսարանում գրանցված հայցորդներին (այսուհետ՝ ասպիրանտ), իսկ «ուսանող» հասկացությունը ներառում է մագիստրատուրայում և բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրսում սովորող ուսանողներին (այսուհետ՝ ուսանող)։ Խմբում կարող են ընդգրկվել նաև Կենտրոնի աշխատակիցները՝ հասարակական հիմունքներով։

Կատարողների թվի առնվազն 30%-ը պետք է կազմեն ուսանողները և/կամ ասպիրանտները։ Թեմայի ղեկավարը և հետազոտողները (բացառությամբ ուսանողների) պետք է ներկայացնեն տվյալ թեմային առնչվող գիտական հրապարակումներ, իսկ ասպիրանտների հետազոտական թեման պետք է համահունչ լինի մրցութային թեմային։ Թեմայի բյուջեն չպետք է գերազանցի **5,5 մլն (հինգ միլիոն հինգ հարյուր հազար) դրամը (գործուղման և այլ ծախսերը, հարկերը և այլ պարտադիր վճարները ներառյալ)։** Վճարումը կատարվելու է փուլերով, նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ Կենտրոնից ներգրավված համակարգողի դրական եզրակացության առկայությամբ։

Ակնկալվող արդյունքները: Հետազոտության արդյունքների միջանկյալ և ամփոփիչ առնվազն երեք քննարկում (2 ներբուհական, 1 հանրային), հետազոտության թեմայի շրջանակներում 3 վերլուծական ակնարկի (հոդվածի) հրապարակում **(այդ թվում՝ ազդեցության գործակից ունեցող միջազգային գրախոսվող պարբերականներում),** կոլեկտիվ մենագրության կամ գիտական զեկույցի հրապարակում, հրապարակված մենագրության կամ զեկույցի ծավալի շուրջ 1/4-ը կազմող ռուսերեն և անգլերեն լեզուներով սեղմագրի հրապարակում, առաջադրված խնդիրների լուծման ամփոփ առաջարկությունների և երաշխավորությունների ներկայացում:

1.7. Հետազոտության հաշվետվությանը ներկայացվող պարտադիր պահանջները:

Հետազոտության հաշվետվությունը չի կարող գերազանցել 150 մեքենագիր էջը (ներառյալ հետազոտության օբյեկտին առնչվող վիճակագրական հավելվածները): Հաշվետվությունը պարտադիր պետք է ներառի հետևյալ բաժինները.

1. ***Հետազոտության մեթոդաբանությունը և նկարագիրը:*** Սույն բաժնում մինչև 10 տպագիր էջի սահմաններում ենթադրվում է ներկայացնել՝
   - հետազոտության համառոտ նկարագրությունը (հետազոտության ժամկետները, հետազոտության օբյեկտը և ընտրված բնագավառները),
   - հետազոտության մեթոդաբանության և կիրառված գործիքների նկարագիրը,
   - հետազոտության ընտրանքի նկարագիրը,
   - հետազոտության տեղեկատվական ապահովման աղբյուրների նկարագիրը,
   - հետազոտության ելակետային դրույթների (ներառյալ գնահատման ու հաշվարկման կիրառված մեթոդների) նկարագիրը:
2. ***Հետազոտության օբյեկտին առնչվող ներկայիս իրավիճակի, զարգացման ընթացքի, հետագա զարգացման հնարավորությունների, մարտահրավերների, խոչընդոտների, միջազգային փորձի, այն ՀՀ-ում կիրառելու հնարավորությունների վերլուծությամբ ապահովված հիմնական արդյունքների նկարագիրը:***

   Այս բաժնում 70-80 տպագիր էջի սահմաններում նախատեսվում է ներկայացնել հետազոտության օբյեկտի դրվածքը Հայաստանի Հանրապետությունում և այլ երկրներում (եթե դա անհրաժեշտ է): Օբյեկտի դրվածքը պետք է ներառի վերջինիս տնտեսական, տեխնիկական, տեխնոլոգիական (եթե դա անհրաժեշտ է), սոցիալ-մշակութային, ժողովրդագրական, ռեսուրսային ապահովվածությանը, զարգացման ընթացքին, հեռանկարին, զարգացման

խոչընդոտներին առնչվող ասպեկտների, ինչպես նաև միջազգային առաջավոր փորձի վերլուծության արդյունքները և հետազոտական խմբի տեսակետներն ու մոտեցումները հետազոտության օբյեկտի ռազմավարական զարգացման առնչությամբ:

3. ***Հետազոտական խմբի առաջարկությունների և երաշխավորությունների փաթեթը և հիմնավորումները***

   Այս բաժնում 20-30 տպագիր էջի սահմաններում անհրաժեշտ է ներկայացնել հետազոտության օբյեկտի ներկա դրվածքի լավարկմանը և ռազմավարական զարգացմանը միտված հիմնական առաջարկությունները, երաշխավորությունները, դրանց իրականացման տեխնիկա-տնտեսական հիմնավորումները, գործողությունների իրականացման տեսլականը և դրանց իրականացման հնարավոր ազդեցությանն առնչվող կանխատեսումները:

4. ***Հետազոտության օտարալեզու սեղմագրերը***

   Հետազոտության անգլերեն և ռուսերեն սեղմագրերը ենթադրում են հրապարակման ներկայացված մենագրության ծավալի 1/4-ի չափով խտացված ներկայացնել հետազոտության երեք բաժիններում ապահովված հիմնական արդյունքները:

1.8. Հետազոտության միջանկյալ և ամփոփ արդյունքների ներբուհական և հանրային քննարկմանը ներկայացվող պարտադիր պահանջները:

Հետազոտության միջանկյալ և ամփոփ արդյունքների քննարկումն իրականացվում է հաստատված ժամանակացույցի ու հաշվետվության ձևի համաձայն: Միջանկյալ հաշվետվությունները կազմակերպվում են ներբուհական քննարկման ձևաչափով, որի ընթացքում խմբի կողմից ներկայացվում են հետազոտությամբ արձանագրված միջանկյալ արդյունքները: **Միջանկյալ արդյունքների վերաբերյալ հետազոտական խումբը հրապարակման է պատրաստում 5-10 տպագիր էջի սահմաններում 1 վերլուծական ակնարկ (հոդված):** Ամփոփ հաշվետվությունը կազմակերպվում է հանրային քննարկման ձևաչափով, որի ընթացքում խումբը ներկայացնում է ամբողջական հետազոտությունն ու դրա արդյունքում ձևավորված երաշխավորությունները: **Ամփոփ արդյունքների վերաբերյալ հետազոտական խումբը հրապարակման է պատրաստում մինչև 5-10 տպագիր էջի սահմաններում 2 վերլուծական ակնարկ (հոդված): Հրապարակման ենթակա վերլուծական ակնարկներից (հոդվածներից) առնվազն մեկը պետք է հրապարակվի ազդեցության գործակից ունեցող միջազգային գրախոսվող պարբերականում:**

1.9. Ակադեմիական բարեվարքությունը:

Հետազոտական խմբի անդամները պարտավոր են պահպանել ՀՀ օրենսդրությամբ և միջազգային իրավական ակտերով սահմանված **ակադեմիական բարեվարքության կանոնները:**

2. ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Սույն պայմանները մշակվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի 2021 թվականի մարտի 2-ի N8-3 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական թեմաների և խմբերի ձևավորման, դրանցում ասպիրանտների և ուսանողների ներգրավման կարգ»-ի (այսուհետ՝ **Կարգ**) պահանջներն ապահովելու նպատակով:

2.1.Մրցույթի նպատակներն ու խնդիրները

2.1.1. **Մրցույթի նպատակներն են.**

- Կենտրոնի մասնագիտացման բնագավառում հետազոտական հավելյալ ակտիվության և հրապարակումների պարբերականության ապահովումը,
- Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին (այդ թվում՝ համատեղությամբ կամ ժամավճարով աշխատող) ընթացիկ հետազոտություններում ներգրավելու ճանապարհով նրանց հետազոտական կարողությունների բարելավումը,
- հետազոտական աշխատանքներում Համալսարանի ասպիրանտների և ուսանողների հետազոտական հմտությունների զարգացումը՝ նրանց հետազոտական աշխատանքներում ներգրավման միջոցով,
- հետազոտությունների արդյունքների ինտեգրումն ուսումնական գործընթացում,
- կիրառական հետազոտությունների իրականացմամբ ՀՀ տնտեսության որևէ խնդրի (խնդիրների) լուծմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը համապատասխան շահառուին (շահառուներին),
- կիրառական հետազոտությունների արդյունքների հրապարակմամբ Համալսարանի՝ իբրև հետազոտական հաստատության, հեղինակության բարձրացումը:

2.1.2. Մրցութային կարգով իրականացվող հետազոտական ծրագրերին առաջադրվում են **հետևյալ խնդիրները.**

- նպաստել ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման առավել կարևոր հիմնահարցերի գիտականորեն հիմնավորված լուծմանը,
- ստեղծել նախադրյալներ հետազոտության արդյունքների առևտրայնացման և արտաքին պատվերների ինստիտուտի զարգացման համար,
- փոխկապակցել ՀՊՏՀ ուսումնական և հետազոտական գործունեությունը, ընդլայնել երիտասարդ հետազոտողների ներգրավվածությունը:

2.2. Հետազոտական խմբերի ձևավորումը և մասնակիցներին ներկայացվող պահանջները:

2.2.1. Հետազոտական խմբերը մրցութային հիմունքներով Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից (այդ թվում՝ համատեղությամբ կամ ժամավճարով աշխատող) և ասպիրանտներից ու ուսանողներից ներգրավվող կատարողներից բաղկացած խմբերն են:

2.2.2. Կենտրոնի հետազոտական խմբերում կարող են ներառվել նաև Համալսարանի բակալավրիատի ավարտական կուրսում և/կամ մագիստրատուրայում փորձառություն անցկացնող ուսանողները՝ նրանց փորձառության ժամկետներում և առանց վարձատրության:

2.2.3. Համաֆինանսավորմամբ իրականացվող, ինչպես նաև այլ՝ բացառիկ դեպքերում, ելնելով հետազոտական թեմայում մասնագիտական այլ ոլորտից մասնագետներ ներգրավելու անհրաժեշտությունից, հետազոտական խմբում կարող են ներգրավվել նաև Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչ (այդ թվում՝ համատեղությամբ կամ ժամավճարով աշխատող) չհանդիսացող անձինք:

2.2.4. Հետազոտական խմբերը ձևավորվում են տվյալ հետազոտական թեմայի կատարման համար և գործում են մինչև թեմայի սահմանված ժամկետի ավարտը, որից հետո, **Կարգի** համաձայն՝ նրանց աշխատանքի հանձնման-ընդունման ավարտական ակտի հաստատվելու պահից, կատարողների և պատվիրատուի պայմանագրային պարտավորությունները դադարում են:

2.2.5. Հետազոտական խմբերում կատարողների ներգրավումը կատարվում է **Կարգի** 19-րդ կետով սահմանված չափանիշներներին համապատասխան:

2.2.6. Հետազոտական խմբի անդամների առնվազն 30%-ը ասպիրանտներ և ուսանողներ են, իսկ մնացածը պետք է լինեն Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ (այդ թվում՝ համատեղությամբ և ժամավճարով աշխատող):

2.2.7. Կենտրոնի աշխատակիցները հասարակական հիմունքներով կարող են ներառվել հետազոտական թեմաներ կատարող խմբերում՝ առանց հետազոտական աշխատանքների համար լրացուցիչ վարձատրության:

2.2.8. Հետազոտական թեմային մասնակցության հայտ ներկայացրած խմբերում ուսանողների և ասպիրանտների ներգրավումը կատարվում է խմբի ղեկավարի կողմից:

2.2.9. Ուսանողի ներգրավման պայման են **Կարգի** 19-րդ կետով սահմանված առաջադիմության նվազագույն շեմը, առկա հմտությունները, մասնագիտական հետաքրքրությունների շրջանակը և հրապարակումները (եթե առկա են): Ասպիրանտ կատարողների համար ներգրավման պայման են առկա հմտությունները, մասնագիտական հետաքրքրությունների շրջանակը և հրապարակումները (եթե առկա են):

2.2.10. Հետազոտական թեմաներում ներգրավված Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը (այդ թվում՝ համատեղությամբ կամ ժամավճարով աշխատող), ասպիրանտներն ու ուսանողները չեն կարող հետազոտական թեմայի իրականացման ժամանակահատվածում ներգրավված լինել Համալսարանի ֆինանսավորմամբ իրականացվող այլ հետազոտական թեմաներում և խմբերում:

2.2.11. Հետազոտական խմբի ղեկավարի և կատարողների գործառույթները, աշխատանքային պարտականությունները և իրավասությունները սահմանվում են ծառայությունների մատուցման պայմանագրերով՝ սույն մրցույթի հրավերում նշված տեխնիկական առաջադրանքին համապատասխան:

Ծառայությունների մատուցման պայմանագրում պարտադիր կերպով նշվում է ակադեմիական բարեվարքության չպահպանման և/կամ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ **Կարգով** նախատեսված պատժամիջոցների մասին:

3. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Հետազոտական թեմայի կատարման համար հատկացված բյուջեն հետազոտական թեմայի մասնակցության հայտ ներկայացրած խմբի ղեկավարի կողմից բաշխվում է հետևյալ սկզբունքով.

ա) խմբի անդամների աշխատանքի վարձատրություն,

բ) գործուղումների և նյութերի ձեռք բերման ծախսեր,

գ) այլ ծախսեր:

Հետազոտական խումբը կամ նրա անդամ(ներ)ը չի (չեն) կարող հոդվածների հրապարակման (հրապարակումների) համար Համալսարանից այլ փոխհատուցում ստանալ, եթե նախահաշվով սահմանված «այլ ծախսեր» հոդվածով փոխհատուցվել են հոդվածների հրապարակման համար ծախսերը:

3.2. Հետազոտական խմբի ղեկավարը իրավասու է ինքնուրույն որոշելու առանձին կատարողների աշխատանքի վարձատրության չափը՝ ըստ **Կարգում** սահմանված միջակայքերի:

3.3. Վարձատրության տարբերակման հիմքում կարող են դրվել.

- կատարողների գիտական աստիճանների տարբերությունները,
- կատարվող աշխատանքի բարդությունը,
- կատարողի բեռնվածությունը (լրիվ կամ կես հաստիքով):

3.4. Հետազոտական խմբի ղեկավարի և կատարողների աշխատանքի վարձատրությունը կատարվում է ըստ նրանց հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրում նշված վարձատրության չափի և պարբերականության՝ հաստատված կատարողական ակտի հիման վրա:

Հետազոտական խմբի ղեկավարի զեկուցագրի հիման վրա Կատարողի նկատմամբ կարող են կիրառվել ծառայությունների մատուցման պայմանագրով և օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցները:

Առանց պատասխանատվության միջոցների կիրառման **Կարգին** համապատասխան ստեղծված հետազոտական խմբից անդամի դուրս գալու նպատակով Հետազոտական խմբի ղեկավարի զեկուցագրի հիման վրա լուծվում է ծառայությունների մատուցման պայմանագիրը՝ խմբի անդամին վճարելով համապատասխան վերջնահաշվարկ: Հետազոտական խմբի ղեկավարի դուրս գալու դեպքում զեկուցագիրը ներկայացնում է Կենտրոնի տնօրենը:

Հետազոտական խմբի ղեկավարի թափուր տեղը կարող է լրացվել խմբի այլ անդամով՝ առանց լրացուցիչ վարձատրության: Հետազոտական խմբի անդամի թափուր տեղը կարող է լրացվել հետազոտական խմբի անդամ չհանդիսացող անձով՝ առանց վարձատրության:

Հետազոտական խմբի ձևավորումից և կատարողների հետ համապատասխան պայմանագրեր կնքելուց հետո սույն կարգի 19-րդ կետին համաձայն հետազոտական խմբի անդամության չափանիշներին այլևս չհամապատասխանելու (կարգավիճակը կորցնելու)

դեպքում ծառայությունների մատուցման պայմանագիրը շարունակում է գործել մինչև պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը:

3.5. Կենտրոնը 15 օրվա ընթացքում դիտարկում է ներկայացված հաշվետվություններն ու հրապարակման ներկայացրած նյութերը և բացթողումների կամ տեխնիկական առաջադրանքով սահմանված պահանջներից շեղումների դեպքում խմբին տալիս է բացթողումները և շեղումները շտկելու ժամկետ, որը չի կարող գերազանցել 20 աշխատանքային օրը: Կատարողական ակտերը ստորագրվում են և պայմանագրով սահմանված վարձատրության ընդհանուր գումարի վերջին 15%-ը վճարվում է բացթողումներն ու շեղումները շտկելուց հետո:

3.6. Ավարտական հաշվետվությունը հաստատվում է Կենտրոնի Փորձագիտական խորհրդի կողմից:

3.7. Գործուղումների, նյութերի ձեռք բերման, ինչպես նաև հայտում նշված այլ ծախսերի համար նախատեսված հատկացումները կատարվում են Կենտրոնի տնօրենի զեկուցագրի և ծախսերը հիմնավորող անհրաժեշտ հաշվապահական փաստաթղթերի առկայության դեպքում՝ հետազոտության համար նախատեսված գումարի շրջանակներում:

Գործուղման ծախսերի հատուցումն իրականացվում է օրենսդրությանը համապատասխան:

4. ՀԱՅՏԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

4.1. Հետազոտական թեմայի կատարման մրցույթին կարող են հայտ ներկայացնել մեկից ավելի հետազոտական խմբեր, որոնք ունեն իրենց կողմից ընտրված ղեկավար և **Կարգով** սահմանված պահանջներին բավարարող կազմ:

4.2. Մրցույթին մասնակցելու հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են **Հավելված 1-ով** սահմանված ձևաթղթերին համապատասխան:

4.3. Հայտը ներկայացվում է առցանց (on–line) ռեժիմով՝ ղեկավարի կողմից ստորագրված և սկանավորված՝ ուղարկելով Կենտրոնի էլեկտրոնային հասցեներին՝ amberd.asue@gmail.com և amberd@asue.am՝ մինչև 2021 թվականի **մայիսի 21-ը ներառյալ (մինչև՝ Երևանի ժամանակով ժամը 17:30):**

Մրցույթի հետ կապված լրացուցիչ հարցերի պարզաբանման համար կարելի է զանգահարել 033 77 01 01 հեռախոսահամարով:

4.4. Հայտի տեքստային մասը ներկայացնել 1,5 տողամեջ հեռավորությամբ, 12 չափի «GHEA Grapalat» տառատեսակով, էջերի բոլոր կողմերից թողնել 2.5 սմ լուսանցք:

5. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՀԱՅՏԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄԸ

5.1. Հետազոտական խմբերի ընտրությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ փորձաքննության արդյունքում:

5.2. Հայտերը դիտարկվում են և մրցույթի արդյունքում հայտը շահած խմբի տվյալները հրապարակվում են հայտերի ընդունման վերջնաժամկետին հաջորդող 15 աշխատանքային օրերի ընթացքում:

5.3. Հայտերի դիտարկման ընթացքում Կենտրոնի կողմից ներգրավվում են 3 (երեք) փորձագետներ, որոնցից 1-ը (մեկը) Կենտրոնի աշխատակազմի ներկայացուցիչ, 2-ը՝ (երկուսը) արտաքին:

5.4. Մրցույթի պայմաններին բավարարող Հայտերը տրամադրվում են ներգրավված փորձագետներին՝ սույն մրցույթի հրավերի 5.9 և 5.10 ենթակետերով սահմանված չափանիշներին և ձևաչափին համապատասխան գնահատում իրականացնելու համար:

5.5. Փորձագիտական կարծիքի ներկայացվող հայտերն արտաքին փորձագետներին ներկայացվում են ծածկագրի հերթական համարով՝ առանց հետազոտական խմբի ղեկավարի և կատարողների տվյալների:

5.6. Հայտերի փորձաքննության ժամանակ դրանք փորձագետների կողմից գնահատվում են՝ ըստ <u>Հավելված 2-ով</u> սահմանված 10 չափանիշների:

5.7. Խմբի ղեկավարի և կատարողների մասնագիտական որակավորումը գնահատվում է միայն Կենտրոնի աշխատակազմի ներկայացուցչի կողմից, որը կազմում է գնահատման սանդղակի առավելագույն միավորի մինչև 1/3-ը:

5.8. Փորձաքննությունը կազմակերպող և իրականացնող անձանց կողմից Հայտերի բովանդակության, փորձաքննության ընթացքի և արդյունքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը երրորդ կողմին արգելվում է:

5.9. Հայտի փորձաքննություն իրականացնող մասնագետը հայտի գնահատումն իրականացնում է ըստ <u>Հավելված 2-ով</u> սահմանված գնահատման թերթիկի, որտեղ նշված 10 չափանիշներից

յուրաքանչյուրին տրվում է 0-5 միջակայքում գնահատական (1,0 միավորի ճշտությամբ), որտեղ 0-ն՝ նվազագույն և 5-ը՝ առավելագույն միավորն է:

5.10. Հայտի փորձաքննության ընթացքում Կենտրոնի աշխատակազմից ներգրավված և արտաքին փորձագետների կողմից 0-5 միջակայքում միավորները տրվում են հետևյալ մեթոդաբանությամբ.

0 միավոր հարցի պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկության բացակայության պատճառով,

1 միավոր հարցի պատասխանը ներկայացված է մակերեսորեն և անորոշ,

2 միավոր հարցի պատասխանը բավարար չէ ամբողջական կարծիք կազմելու համար,

3 միավոր հարցի պատասխանն, ընդհանուր առմամբ, բավարարում է հարցի պահանջներին, բայց կան զգալի անհամապատասխանություններ,

4 միավոր հարցի պատասխանը ընդհանուր առմամբ, համապատասխանում է առաջադրված պահանջներին, սակայն առկա են որոշակի անհամապատասխանություններ,

5 միավոր հարցի պատասխանը լիովին համապատասխանում է հարցի պահանջներին և թերություններն աննշան են:

5.11. Հայտի փորձաքննության վերջնական գնահատականը ձևավորվում է երեք փորձագիտական գնահատականների միջին թվաբանականի հիման վրա:

5.12. Այն դեպքերում, երբ երեք փորձագետներից երկուսի գնահատականները գնահատման սանդղակի առավելագույն միավորի 50 տոկոս և ավելի չափով տարբերվում են, փորձաքննության վերջնական գնահատականը ձևավորվում է երեք փորձագետներից երկուսի՝ իրար մոտ գնահատականների միջին թվաբանականի հիման վրա:

5.13. Փորձաքննության արդյունքները հաստատվում են Փորձագիտական խորհրդի կողմից՝ հատուկ արձանագրությամբ, որը ներառում է մրցույթին մասնակցության հայտ ներկայացրած խմբերի վարկանիշային ցանկը (ըստ հայտատուների ծածկագրերի) և յուրաքանչյուր

հետազոտական թեմայի կատարման համար առավելագույն միավոր ստացած խմբի ծածկագիրը:

5.14. Եթե վերջնական փորձագիտական գնահատականը փոքր է գնահատման սանդղակի առավելագույն միավորի 50 տոկոսից, ապա հայտը մերժվում է:

5.15. Միևնույն հետազոտական թեմայի համար հայտ ներկայացրած մեկից ավելի խմբերի դեպքում նախապատվությունը տրվում է փորձաքննության արդյունքներով առավելագույն միավոր ստացած խմբին: Հավասար միավորների դեպքում նախապատվությունը տրվում է արտաքին փորձագետների կողմից ավելի բարձր միավորներ ստացած խմբին:

5.16. Փորձագիտական խորհրդի անդամը, ով ընդգրկված է նաև հետազոտական խմբում, տվյալ հայտի քվեարկությանը մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով:

5.17. Փորձագիտական խորհրդի կողմից հաստատված՝ Հայտերի փորձաքննության արձանագրությունը Փորձագիտական խորհրդի նախագահը ներկայացնում է Համալսարանի ռեկտորին:

5.18. Համալսարանի ռեկտորը, ելնելով փորձաքննության արդյունքներից, հրամանագրում է ֆինանսավորման ենթակա հետազոտական խմբերին, հաստատում է իրականացման ենթակա հետազոտական թեմաների ցանկը, դրանց ղեկավարների և կատարողների ցուցակը՝ նշելով յուրաքանչյուր գիտական թեմայի կատարման համար նախատեսվող գումարի հատկացման չափը:

5.19. Փորձաքննության արդյունքում հաղթած հետազոտական խմբերի ղեկավարների և կատարողների հետ կնքվում են ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագրեր, որոնք գործում են մինչև հետազոտական թեմայի ժամկետի ավարտը:

5.20. Պայմանագրերում խմբի ղեկավարի և կատարողների գործառույթները սահմանվում են սույն մրցութային հրավերով և տեխնիկական առաջադրանքով սահմանված պայմաններին համապատասխան:

5.21. Պայմանագրերում խմբի ղեկավարի և կատարողների աշխատանքի վարձատրությունը և պարբերականությունը սահմանվում են **Կարգի** 32-38-րդ կետերով սահմանված պայմաններին համապատասխան՝ ըստ հայտում ներկայացված հաստիքացուցակի:

6. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Հետազոտական թեմաների կատարումը պարտադիր է սույն մրցութային հրավերով և խմբի ներկայացրած հայտով սահմանված ժամկետներում:

6.2. Հետազոտական թեմաների կատարումը պարտադիր է սույն մրցույթի հրավերով սահմանված տեխնիկական առաջադրանքի պայմաններին և արդյունքների հրապարակայնացման ժամանակացույցին ու սահմանված ձևաչափին համապատասխան:

6.3. Հետազոտական թեմաների կատարմամբ պարտադիր պետք է ապահովվեն սույն մրցույթի հրավերով սահմանված ակնկալվող արդյունքները, ինչպես նաև մրցույթի հայտում խմբի կողմից ներկայացված հավելյալ արդյունքները:

6.4. Սահմանված ժամկետի ավարտին հետազոտական խումբը Կենտրոնին է ներկայացնում իրականացված հետազոտության հաշվետվությունը, հետազոտությամբ ապահովված արդյունքները ներառող հրապարակման ենթակա նյութերը (ներառյալ հետազոտության արդյունքներն արտացոլող հրապարակման ներկայացված նյութի ծավալի 1/4-ը կազմող անգլերեն և ռուսերեն լեզվով համառոտագրերը):

6.5. Սահմանված ժամկետներում ավարտին չհասցված, կամ սույն մրցույթի հրավերով սահմանված պարտադիր նվազագույն արդյունքները չապահոված հետազոտական խումբը վճարում է տուժանք, դրամաշնորհի հայտով հայցված ընդհանուր գումարի 25%-ի չափով:

6.6. Սահմանված ժամկետներում ավարտին չհասցված, կամ սույն մրցույթի հրավերով սահմանված պարտադիր նվազագույն արդյունքները չապահոված հետազոտական խմբերի անդամները զրկվում են հաջորդող երկու հաշվետու տարիների ընթացքում Համալսարանի ֆինանսավորմամբ որևէ հետազոտական ծրագրի մասնակցելու իրավունքից:

6.7. Բացառիկ դեպքերում, երբ առաջացել է հետազոտական թեմայի կատարման ժամկետի երկարաձգման անհրաժեշտություն (կապված նոր իրողությունների ի հայտ գալու և, դրանցով պայմանավորված, նոր առաջարկների փաթեթներ ու դրանց կատարման մեթոդական երաշխավորություններ մշակելու անհրաժեշտության հետ), հետազոտական խմբի ղեկավարի զեկուցագրի հիման վրա Փորձագիտական խորհուրդը կարող է երկարաձգել թեմայի կատարումը ոչ ավելի, քան վեց ամիս ժամկետով՝ առանց լրացուցիչ վարձատրության:

6.8. Հետազոտական թեմաների համակարգումը և ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է Կենտրոնի աշխատակազմից խմբին կցված համակարգողի կողմից:

6.9. Հետազոտական թեմաների ընթացիկ վերահսկողության բաղադրիչներ են.

- հետազոտական խմբի ղեկավարի կողմից հաստատված հետազոտության ընթացքի և ապահովված փաստացի արդյունքների վերաբերյալ միջանկյալ և ամփոփ հաշվետվությունների ժամանակացույցերը,
- հետազոտական խմբի ղեկավարի կողմից հաստատված հետազոտական արդյունքների ներհամալսարանական և հանրային քննարկումների կազմակերպման ժամանակացույցերը,
- տեխնիկական առաջադրանքով սահմանված այլ գործողությունների (վերլուծական ակնարկների, գիտական հոդվածների և այլ նյութերի հրապարակում) համար սահմանված ժամանակացույցերը և փաստացի արդյունքները,
- խմբի ղեկավարի կողմից թեմայի կատարողներին վերապահված աշխատանքների կատարման հաշվետվությունը,
- աշխատանքի վարձատրությունից բացի հետազոտության նախահաշվով նախատեսված այլ ֆինանսական ծախսերի փաստաթղթային հիմնավորումները,
- տեխնիկական առաջադրանքով սահմանված վերջնական հրապարակման ներկայացվող հիմնական արդյունքները ներառող հաշվետվությունը և դրա երկլեզու համառոտագրերը:

6.10. Հետազոտական աշխատանքները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև պայմանագրով նախատեսված ժամկետներում չկատարելու դեպքում հետազոտական խմբի անդամները կրում են պատասխանատվություն օրենսդրությանը համապատասխան: